

## Հոկտեմբերի 10-ը հոգեկան առողջության համաշխարհային օրն է

Դրան ընդառաջ, Հանրային քաղաքականության ինստիտուտը (ՀԻԻ) ներկայացնում է Հայաստանում հոգեկան առողջության բնագավառի հիմնախնդիրների համառոտ նկարագիրը և քաղաքականության փոփոխության՝ ՀԻԻ մոտեցումները:


Հայաստանի Հանրապետությունը՝ որպես հետխորհրդային երկիր, ժառանգել էր հոգեկան առողջության պահպանման այնպիսի համակարգ, որտեղ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող (այսուհետ՝ ՀԱԽՈՒ) անձանց տրամադրվող ծառայությունները կենտրոնացած էին միայն հոգեբուժական հիվանդանոցներում և դիսպանսերներում:

ՀԱԽՈՒ անձինք համարվում էին ընտանիքի խարանդ, մեկուսացվում էին հասարակությունից՝ տանը կամ հոգեբուժական հաստատությունում: Ցավոք, այս մոտեցումը հիմա էլ ինտեգրացված շարունակվում է և դեռևս լայն տարածում ունի:





Վերոնշյալ փաստաթղթերով ուրվագծվում են հոգեկան առողջության պահպանմանն ուղղված սոցիալական քաղաքականության գլխավոր նպատակները, որոնք են.

- Ապահիստիտուցիոնալացումը,
- Անցումը՝ բժշկական մոդելից՝ սոցիալական մոդելին:



ՀԱՄՈՒ անձանց ինսամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի միջոցառումների ծրագրով (2013-2017թթ.).

Նախատեսվում էր	Արդյունքը
<p><b>2</b> համայնքում ստեղծել շուրջօրյա ինսամքի տներ՝ առավելագույնը <b>30</b> անձի բնակության համար:</p>	<p>Ստեղծվել է <b>1</b> ինսամքի տուն (Սպիտակի ինսամքի տունը)</p>
<p><b>3</b> համայնքում ստեղծել համայնքային ցերեկային կենտրոններ՝ առավելագույնը <b>30-50</b> անձի համար:</p>	<p><b>X</b> Չի իրականացվել</p>

<p>Առնվազն <b>2</b> համայնքում ստեղծել ցերեկային կենտրոններ երեխաների և դեռահասաների համար՝ <b>30-50</b> անձի համար:</p>	<p>Ստեղծվել է <b>1</b> ցերեկային կենտրոն («Ջորակ» ցերեկային կենտրոնը)</p>
<p>Կազմակերպել <b>10</b> աստարտը բնակարաններ՝ <b>3-10</b> անձի բնակության համար:</p>	<p> Չի իրականացվել</p>
<p>Ստեղծել խնամքի <b>1</b> շուրջօրյա և <b>1</b> ցերեկային կենտրոններ ապրեցնելի համար:</p>	<p> Չի իրականացվել</p>


Ըստ Հայեցակարգի և Ռազմավարության՝ ապահիստիտուցիոնալացումը միակ տարբերակն է, որով հնարավոր է հաղթահարել ՀՀ-ում հոգեկան առողջության ոլորտում առկա մարտահրավերները:

Անշուշտ, սոցիալական մոդելի ներդրումն ու ապահիստիտուցիոնալացման մեկնարկը կարևորագույն քայլեր են: Ցավոք, Հայաստանում այս գաղափարներն աղավաղված են կյանքի կոչվել: Մասնավորապես, ՀԱԽՈՒ անձանց մի մասը որոշ խոշոր (մեծ տարածք և շահառուների բարձր թվաքանակ ունեցող) հաստատություններից պարզապես տեղափոխվել են ավելի փոքր (փոքր տարածք և շահառուների ցածր թվաքանակ ունեցող) հաստատություններ:

Ապահիստիտուցիոնալացման գործընթացը մեխանիկական և կոսմետիկ բնույթ է կրել, այն չի ուղեկցվել ՀԱԽՈՒ անձանց խնամքի և բուժման մեթոդների ու մոտեցումների փոփոխություններով:

Իրականում, ապահիստիտուցիոնալացումն ու սոցիալական մոդելի ներդրումը ենթադրում են ավելի խորքային փոխակերպումներ և դերակատարների առավել լայն շրջանակ

(ընտանիք, ազգականներ, ՅԱԽՈՒ անձի համար նշանակալի այլ անհատներ, և, ընդհանուր առմամբ, ամբողջ հասարակությունը):



Բացի այդ, անհրաժեշտ է հող նախապատրաստել ակնկալվող փոփոխությունների համար: Բազմամասնագիտական թիմի կողմից պետք է աշխատանքներ իրականացվեն ՅԱԽՈՒ անձանց հետ՝ նրանց նախապատրաստելու տեղափոխությանը, նոր իրավիճակին:

Անհրաժեշտ է իրազեկման և նախապատրաստական այլ աշխատանքներ իրականացնել նաև այն համայնքի բանակիչների հետ, որտեղ նախատեսվում է կիրառել ծառայությունների նոր մոդելը: Դա հնարավորություն կտա ՅԱԽՈՒ անձանց՝ ավելի արագ հաղթահարել ադապտացիոն շրջանը:

ՉԹԻ կարծիքով, հոգեբուժական առկա համակարգի լավագույն այլընտրանքը կարող են դառնալ **համայնքահեն ծառայությունները**:

Համայնքահեն ծառայությունների յուրահատկությունը նրանում է, որ կարևորվում է համայնքում առկա ռեսուրսների (սյուրթական, մարդկային, այլ) ակտիվացումը և օգտագործումը՝ ՉԱԽՈՒ անձնանց վերականգնման գործընթացում:

Համայնքահեն ծառայությունների իրավունքը ճանաչված է ՄԱԿ-ի ՉԱԻԿ-ի 19-րդ հոդվածում.

- Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն համայնքի մեջ ապրելու, իրենց բնակության վայրը ընտրելու, տնային, ինչպես նաև՝ մյուս բոլոր համայնքային ծառայություններից օգտվելու իրավունք,
- Պետությունները պետք է օժանդակեն հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրմանն ու լիիրավ ներգրավմանը համայնքում:

### **Ինչո՞ւ են նախընտրելի համայնքահեն ծառայությունները.**

- ✚ Համայնքահեն ծառայությունների որակն ավելի բարձր է:
- ✚ Համայնքահեն ծառայությունների միջոցով խնամքի կազմակերպումը պակաս ծախսատար է, քան ավանդական հոգեբուժական հաստատությունների միջոցով:
- ✚ Համայնքահեն ծառայությունների շնորհիվ ՉԱԽՈՒ անձանց հետ աշխատելու ընդհանրական մոտեցումից անցում է կատարվում անհատական մոտեցման. հաշվի են առնվում ՉԱԽՈՒ անձանց յուրահատուկ կարիքները, և կազմվում է անհատական աշխատանքի պլան:
- ✚ Համայնքահեն ծառայությունները հնարավորություն են տալիս հնարավորինս վաղ բացահայտել հոգեկան առողջության խնդիրները, բարձրացնել հասարակության վստահության մակարդակը տրամադրվող ծառայությունների հանդեպ, քանի որ «ամեն ինչ կատարվում է իրենց աչքի առջև»:
- ✚ Համայնքահեն ծառայությունների հիմքում դրված է ՉԱԽՈՒ անձանց իրավունքների պաշտպանությունը:



ՉՔԻ կողմից առանձնացվել են նաև հոգեկան առողջության բնագավառում առավել ակտուալ հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման հնարավոր քայլերը:

## Հիմնախնդիրներ

ՀԱԽՈՒ անձանց տրամադրվող ծառայությունները չեն բխում նրանց կարիքներից:

ՀԱԽՈՒ անձանց տրամադրվող ծառայություններն ավանդական, ինստիտուցիոնալ տիպի են:

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքով ՀԱԽՈՒ անձանց համար նախատեսված է միայն հոգեբուժական օգնության տրամադրում

Ավանդական ինստիտուցիոնալ հաստատություններում խախտվում են ՀԱԽՈՒ անձանց իրավունքները:

## Առաջարկություններ

- Մշակել ՀԱԽՈՒ անձանց կարիքների գնահատման մեթոդաբանություն և ընթացակարգ՝ հարմարեցված հայաստանյան իրականությանը:
- Կարիքների գնահատումն իրականացնել բազմամասնագիտական թիմերի միջոցով:

- Գործարկել խնամքի նոր մոդել, որը թույլ կտա ծառայություն մատուցել ՀԱԽՈՒ անձին՝ իր անմիջական միջավայրում (համայնքահեն ծառայությունների մոտեցումն է):
- Ակտիվացնել ՀԱԽՈՒ անձին՝ հրաժարվելով օգնություն հայցողի պասիվ կարգավիճակում նրան դիտարկելուց:

- ՀԱԽՈՒ անձանց համար նաև (ի թիվս հոգեբուժական օգնության) սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական աջակցության օրենսդրական երաշխիքներ նախատեսել:

- Ստեղծել և կիրառել ՀԱԽՈՒ անձանց ծառայություններ մատուցող կառույցների պարտավորությունների և շահառուների իրավունքների միջև առաջացած հակասության հաղթահարման մեխանիզմներ:
- Այդ կառույցների գործունեության հիմքում դնել ՀԱԽՈՒ անձանց իրավունքների նկատմամբ հարգանքը:
- ՀԱԽՈՒ անձանց իրազեկել իրենց իրավունքների մասին:
- ՀԱԽՈՒ անձանց ազգականներին և այլ փոխկապակցված անձանց իրազեկել ՀԱԽՈՒ անձանց իրավունքների և դրանց իրացման հնարավորությունների մասին:



Հասարակության մեջ առկա է խտրական վերաբերմունք ՀԱԽՈՒՒ անձանց նկատմամբ:

- Ուսումնասիրել հասարակության կողմից ՀԱԽՈՒՒ անձանց նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունքի պատճառահետևանքային կտպերը:
- Իրականացնել բնակչության իրազեկվածության և հանդուրժողականության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:
- Մշակել իրավական մեխանիզմներ՝ ՀԱԽՈՒՒ անձանց նկատմամբ խտրականության դրսևորումները կանխելու նպատակով:

ՀԱԽՈՒՒ անձանց հասանելի չէ առաջարկվող առողջապահական և սոցիալական ծառայությունների համապարփակ պատկերը

- Քարտեզագրել հոգեկան առողջության ոլորտում առկա առողջապահական և սոցիալական ծառայությունները, մշակել համապատասխան ուղեցույց:

